ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

30.06.22թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպված նիստին մասնակցում էին Գ. Ավետիսյանը, Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Պ. Ասլիբեկյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Թ.Ջանվելյանը։ Նիստին հրավիրված էր նաև Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Ս. Ցուցուլյանը։

Նիստը կազմակերպված էր zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան, քարտուղար՝ Ա. Ալեքսանյան։

Օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը։

Օրակարգ

1. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2022-2023 ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացում և քննարկում /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/։
2. 2022 թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում /զեկ. Ա. Մարգարյան/։
3. 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/։
4. Ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվություն /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/։
5. Ընթացիկ հարցեր

5.1. Ս. Ցուցուլյանի «Միջազգային զբոսաշրջություն» մեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին։

Բաց քվեարկությամբ՝ ձայների 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 11/1

- Հաստատել նիստի օրակարգը։

1. ***Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2022-2023 ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացման և քննարկման մասին /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:***

Մ. Միքայելյանը և Գ. Հովհաննիսյանը հայտնեցին, որ մասնագիտական ամբիոններում կատարվել են 2022-2023 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բաշխումը։ Առաջիկայում կիրականացվի նաև ավարտական աշխատանքների բաշխումը։ Ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները իրազեկվել են 2022- 2023 ուստարվա իրենց անհատական բեռնվածության մասին։

Ամբիոնների վարիչները մասնավորապես տեղեկացրին, որ անհատական բեռնվածությունները տրամադրվել են ամբիոնների դասախոսներին։ Վերջիններս պետք է մինչև սթ. օգոստոսի 31-ը ամբիոններ ներկայացնեն աշնանային կիսամյակում իրենց դասավանդելիք դասընթացների փաթեթները, ինչպես նաև Moodle հարթակում տեղադրեն այդ դասընթացներին վերաբերող բոլոր նյութերը։

Մ. Միքայելյանը մտահոգություն հայտնեց Էկոնոմետրիկա, Մակրո և Միկրո տնտեսագիտության մոդելներ դասընթացների դասավանդման կապակցությամբ։ Պատճառն այն է, որ հիշյալ դասընթացները պարապող դասախոսները մեկնել են արտերկիր։

Գ. Հովհաննիսյանի խոսքով՝ անհատական բեռնվածությունը սահմանելիս առաջնորդվել են նախորդ ուստարվա բաշխվածությամբ։ Նա գտնում է, որ դասախոսի դրույքի համալրման դեպքում լրացուցիչ ժամերի դասավանդումը պետք է իրականացվի ժամավճարով։ Դասավանդման նպատակահարմարությունից ելնելով, որոշ դասընթացների դեպքում կատարել կիսմայակային տեղափոխություններ։

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2022-2023 ուստարվա Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների անհատական բեռնվածությունների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին.- 2022թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:***

Ա. Մարգարյանի գնահատմամբ՝ ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գոհացուցիչ են, քանի որ հինգ ուսանող ստացել է գերազանց գնահատական: Այս պատկերը արդյունքը է բովանդակային նախապաշտպանությունների, որոնց ընթացքում բացահայտվել են աշխատանքներում առկա թերությունները, շտկվել են բացթողումները: Ավարտական աշխատանքների պաշտպանությունը ցույց տվեց, որ ուսանողները լիովին տիրապետում էին իրենց թեմային և կարողանում էին պատշաճ ներկայացնել: Խոսելով հեռակա բաժնում ավարտական աշխատանքների պաշտպանության մասին՝ Ա. Մարգարյանը նկատեց, որ արդյունքներն այնտեղ գոհացնող չէին: Ակադեմիական անբավարար մակարդակ ցուցաբերեցին հատկապես նախորդ տարիներին ավարտական աշխատանքը չպաշտպանած ուսանողները: Նրանք այս տարի ևս չկարողացան պատշաճ կերպով ներկայացնել իրենց աշխատանքը: Կային աշխատանքներ, որոնցում բացակայում էր ինքնուրույն հետազոտությունը, և, ըստ էության, դրանք այս կամ այն գրքից կատարած քաղվածքներ էին: Հետազոտական բաղադրիչի բացակայությունը հատկապես նկատելի էր հեռակա համակարգի աշխատանքներում, իսկ այն գործերը, որոնք ունեին հետազոտական բնույթ՝ բավարար չէին: Ատեստավորման հանձնաժողովի նախագահի բնորոշմամբ՝ առկա համակարգով սովորողների աշխատանքները ունեին կիրառական և արդիական նշանակություն:

«Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գոհացնող են: Ա. Մարգարյանը այդ աշխատանքները բնորոշեց որպես թիրախային, արդիական և կիրառական: Ուսանողները հավաքել, վերլուծել և համակարգել են ՀՀ մարզերի զբոսաշրջային ռեսուրսների վերաբերյալ հարուստ տեղեկատվություն: Իրենց աշխատանքները իրականացրել են այդ փաստերի վերլուծության հիման վրա, կատարել են եզրահանգումներ ռեսուրսների օգտագործման առկա վիճակի և դրանց օգտագործման հեռանկարային գործընթացների վերաբերյալ: Նշվեց, որ թեև ուսանողները օգտագործել են բավարար չափով գրականություն, սակայն անհրաժեշտ է մեծացնել նորագույն հրատարակությունների տեսակարար կշիռը, որը զգալիորեն կբարելավի աշխատանքների որակը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.12 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների 2021-2022 ուստարվա ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքների պաշտպանության) արդյունքները ընդունել ի գիտություն:

3. Լսեցին.-2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացման մասին /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանը հայտնեց, որ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում երկու դասընթացի՝ Մակրոտնտեսագիտության և Վիճակագրության գծով իրականացվել են հետազոտական աշխատանքներ: Երրորդ կուրսում Մակրոտնտեսագիտություն /դասախոս՝ Գ. Մինասյան/ առարկայից ուսանողներին հանձնարարվել է անհատական թեմաներ, որոնց վերաբերելի գրականությունը եղել է գերազանցապես անգլերեն լեզվով: Այդ հանգամանքը նպաստել է հետազոտական աշխատանքների որակի բարձրացմանը: 17 ուսանողից 13-ը ստացել է բարձր միավոր: Հետազոտական

աշխատանքի կատարումը հաջող է եղել նաև Վիճակագրություն առարկայի /դասախոս՝ Դ. Աֆյան/ գծով: Դ. Աֆյանը հետազոտության զգալի մասը իրականացրել է Տավուշի մարզի օրինակով՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ: 27 ուսանողից 19-ը բարձր միավոր է ստացել: Ընդհանուր առմամբ, հետազոտական աշխատանքների կատարումը նա առաջարկեց գնահատել բավարար:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ երկրորդ կիսամյակում նախատեսված է եղել հետազոտական բաղադրիչով երեք դասընթաց՝ երկուսը՝ երրորդ կուրսում, մեկը՝ երկրորդ: Նախորդ տարիների փորձի առկայությունը թույլ է տվել խուսափել հնարավոր թերություններից: Գ. Հովհաննիսյանը հավելեց, որ անհրաժեշտ է աստիճանաբար ավելի մեծացնել հետազոտական բաղադրիչով աշխատանքի կարևորությունը, քանի որ այն հնարավորություն է տալիս ուսանողներին իրականացնել հետաքրքիր հետազոտություններ և ավելի խորը պատկերացնել աշխատանքի իմաստը:

Միևնույն ժամանակ ամբիոնների վարիչների դիտարկմամբ, հետազոտական բաղադրիչի իրականացման մեխանիզմում առկա են մի շարք թերի և ոչ լիարժեք իրացվելի կետեր: Բացեր կան աշխատանքի ղեկավարման հարցում. մեկ դասախոսի համար դյուրին չէ իրականացնել ամբողջ աշխատանքի արդյունավետ և հանգամանալի ղեկավարում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ՐՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

4. ***Լսեցին.- Ֆակուլտետի ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվություն /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:***

Լսեցին.- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանին։

Մ. Միքայելյանը հաղորդեց, որ ամբիոնում դասաժամերը բաշխվել են դրույքով աշխատող 13 և ժամավճարային հիմունքներով հրամանագրված հինգ դասախոսների միջև։ Ամբիոնի 18 աշխատակիցներից 2-ը ունեն պրոֆեսորի, 4-ը դոցենտի, 6-ը ասիստենտի, 6-ը դասախոսի կոչումներ։

Մ. Միքայելյանը նշեց, որ «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են համաձայն ամբիոնի հաստատված աշխատանքային պլանի։ Ամբիոնի բոլոր դասախոսները աշխատել են հաստատված անհատական ծանրաբեռնվածություններով։ Նրանք հիմնականում կատարել են ուսումնական գործընթացի տարբեր օղակների համար սահմանված ծրագրերի պահանջները։ Կարդացվել են դասախոսություններ ուսումնական պլանով հաստատված ժամաքանակով, անց են կացվել սեմինար ու գործնական պարապմունքներ, կազմակերպվել են ընթացիկ, ամփոփիչ քննություններ և ստուգումներ։ Կատարվել են դասալսումներ, որոնց արդյունքները ընդհանուր առմամբ դրական են։ Նկատված թերությունների վերաբերյալ առանձին քննարկումներ են եղել համապատասխան դասախոսների հետ։

Ամբիոնային աշխատանքների առումով խրախուսանքի արժանի է այն դասախոսների գործելակերպը, ովքեր հանդես են գալիս նաև հրապարակումներով։ 2021-2022 ուստարում դասախոսները հրատարակել են 6 հոդված (Արփինե Եգանյան՝ 2 հոդված, Գարիկ Սիրոյան՝ 2 հոդված, Արթուր Մուրադյան՝ 2 հոդված)։

Ամբոնի վարիչը հաղորդեց նաև, որ դասախասները մասնակցել են ԵՊՀ -ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին։

Լսեցին.- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանին։

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ 2021-2022 ուստարում «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի դասաժամերը բաշխվել են ամբիոնի դրույքով աշխատող 11 և ժամավճարային հիմունքներով հրամանագրված 5 աշխատակիցների միջև: Ամբիոնի 17 աշխատակիցներից 3-ը ունեն պրոֆեսորի, 3-ը՝ դոցենտի, 8-ը՝ ասիստենտի, 3-ը՝ դասախոսի կոչումներ:

Գ. Հովհաննիսյանը պրոֆեսոր Ա. Պոտոսյանի վերջերս հրապարակած «Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն» գիրքը ներկայացրեց որպես ամբիոնի մեծ ձեռքբերում: Նա արժևորեց Միջազգային զբոսաշրջության վերաբերյալ մեթոդական ձեռնարկ կազմելու և հրատարակության հանձնելու՝ ամբիոնի ասիստենտ Ս. Ցուցուլյանի նախաձեռնությունը:

Ամբիոնի վարիչը հաղորդեց, որ ամբիոնում իրականացվել է ավարտական աշխատանքների բաշխում, ուսանողներին տրամադրվել են գիտական աշխատանքների բովանդակությունը, գրականության ցանկը, իրականացվել է խորհրդատվություն: Ուշադրության կենտրոնում է պահվել գիտական ղեկավարների հետ ուսանողների հանդիպման գրաֆիկը:

Ամբիոնի կողմից իրականացվել են ընթացիկ քննությունների, ընթացիկ ստուգումների և եզրափակիչ քննությունների անցկացման նախապատրաստական աշխատանքներ: Նախապես տրված հարցաշարերից կազմվել են քննական տոմսերը: Վերահսկողությունն իրականցվել է ինչպես ամբիոնի վարիչի, այնպես էլ Կրթական ծրագրերի պատասխանատուի կողմից:

Իրականացվել են թեմատիկ պլանների կատարողականի վերաբերյալ ստուգումներ: Իրականացված ստուգումների արդյունքում թեմատիկ պլանները համապատասխանում էին կատարողականին:

Ամբիոնի վարիչի կողմից իրականացվել են դասալսումներ, արդյունքների քննարկում. առաջադրված խնդիրներին տրվել են կոնկրետ լուծումներ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Տնտեսագիտության ֆակուլտետի Ընդհանուր տնտեսագիտության և Տուրզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների 2021-22 ուստարվա աշխատանքները գնահատել բավարար:

5.1. Լսեցին.- Ս. Յուցուլյանի «Միջազգային զբոսաշրջություն» մեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին /զեկ. Գ. Հովհաննիսյանը/:

Ս. Յուցուլյանի «Միջազգային զբոսաշրջություն» մեթոդական ձեռնարկը ներկայացրեց ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը: Նա ասաց, որ սույն ձեռնարկը երաշխավորելու գործընթացը սկսվել է դեռևս մարտ ամսից: Ձեռնարկի նպատակն է ձևավորել միջազգային զբոսաշրջության ոլորտում տեսական գիտելիքներ ունեցող ուսանողների՝ հաշվի առնելով շուկայական պայմաններում արդյունավետ ու մտածված որոշումներ կայացնելու գործնական հմտությունների և կարողությունների զարգացումը, ինչպես նաև նպաստել միջազգային զբոսաշրջության՝ որպես գիտության և մարդկային գործունեության ձևի մասին գիտելիքների ընդհանուր համակարգի ստեղծմանը:

Մեթոդական ձեռնարկի նպատակն է ամրապնդել ուսանողների գործնական կարողությունները՝ սեմինար և գործնական աշխատանքների իրականացման ժամանակ: Ձեռնարկում տրված են նաև ինքնուրույն աշխատանքների, ընթացիկ ստուգման թեստերի նմուշներ, ռեֆերատի թեմաներ:

«Միջազգային զբոսաշրջություն» մեթոդական ձեռնարկը, դասական գրականության հետ մեկտեղ, ներկայացնում է միջազգային զբոսաշրջության ոլորտում տեղական և արտասահմանյան հեղինակների ժամանակակից ուսմունքները, ինչպես նաև դիտարկում է միջազգային զբոսաշրջության ոլորտում միջազգային կազմակերպությունների դրական փորձը, զբոսաշրջության տարածաշրջանային և միջազգային շուկաներում տիրող իրավիճակը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում.- *Երաշխավորել Ս. Յուցույանի «Միջազգային զբոսաշրջություն» մեթոդական ձեռնարկը տպագրության:*

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա. Մարգարյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***